**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-03» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» սեպտեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Արման Ղուկասյան (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*

Կարեն Համբարձումյան (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Ավետիք Ավագյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Սարգիս Արմենակյան (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*Հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-03» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի սեպտեմբերի 08-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետև՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| N | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | 2,600,000 |

2.2 Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «Մ-Բի-Ռ» ՍՊԸ | ք. Երևան, Մյասնիկյան 22/4<br>Հեռ. (055)558550 |

2.3 Համակարգում 30.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1.1 «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**3.2.1** Ղեկավարվելով Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով՝ հրավերի առաջին մասի 7.9 կետով սահմանված է. <<Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ>>: «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի հաստատման էլեկտրոնային թվային ստորագրության ճշտությունը առաջացնում է տարակարծություն:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց՝**

- նիստը կասեցնել և վերոնշյալ էլեկտրոնային ստորագրության հետ կապված առաջացած հարցը պարզաբանելու նպատակով դիմել «Մ-ԲՌ-Ռ» ՍՊԸ –ին՝ առաջարկելով մինչև ս.թ. սեպտեմբերի 09-ի ժամը 16:00-ն տրամադրել համապատասխան պարզաբանում:
- հաջորդ նիստը հրավիրել սեպտեմբերի 09-ին, ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Արման Ղուկասյան

Անդամներ՝

____________ Կարեն Համբարձումյան

____________ Ավետիք Ավագյան

____________ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

____________ Մարիամ Հայրապետյան